

գրական կարգի. եւ այսպէս բարդուեր ու կազմուեր է արդի կանոնը:

Մեր մատենագրերէն կը յիշուի կերակրոց վրայ տեսնագրելու պարագայն ալ: Զաքարիա կթղ. խօսելով առ խաչն՝ կ'ըսէ. «Քեւ կնքեալ մաքրին կերակուր եւ ըմպելի մեր» (Զաք. խաչ). եւ զոր կը կրկնէ Տաթեւացին ալ. «Նշանաւ խաչին կնքեմք զամենայն կերակուրս եւ զըմպելիս» (Քրդ. ամբ. 348): Նոյնը կը յիշատակէ նաեւ Ապարանեցին, դնելով տեսնագրութիւնը «խաչանիշ կնքով» (Ապար. ԾԵ, Թ): Նկատելով օրհնութեան կանոնին հին վիճակը, դժուար է ճշդել՝ թէ ո՞ր կատին կը լինէր այդ կնքումը. փառատրութենէն յառաջ թէ վերջը:

5. — Կը բազմին: — Եթէ ազնուականք կը նստէին բազմոցաց վրայ եւ ուսմիկը գետինը (աստ, 50), ի՞նչպէս կ'ընէին վանականք: Ասոր ակնարկութիւնը կը կարծեմ տեսնել Եղիշէի քով, որ կ'ըսէ. «ակմբին յիւրաքանչիւր տեղիս» (215): Բայիդ արմատն ակումբ՝ կը նշանակէ թէ նստողաց ժողովը (նոյն, 133), եւ թէ նրատելու սփռոցը, որ չի ժխտեր գետնէն բարձր բազմոցի մ'ալ գոյութիւնը իւր ներքեւ, ինչպէս տեսանք (աստ, 56): Արդ՝ «ակմբին» չի նշանակեր խմբուիլ, զի իւր